



108. ԼԱԼԾԵԳՑԸ ՆԱՆ ՔԱՌԸ

Մին լալբեգյ մարթու էծեր կորշում ըն։ Տա կյամ ա տըհսնում մին մարթ ուրանն բոստանը պահավ ա տամ։ Էտ մարթն էլ քառ ա ինոնմ։ Լալբեգյը խըռիսըուալավ զոռավ ծեն ա տամ, վըեններավ-ծըեռքերավ տրան հըրցնում, թա ըստընդեբյ էծեր լը՝ ս տըհսալ։ Էտ քառը գյուղոնմ ա թա տա ուրանն պարլօր ա տամ, ինքին էլ ա կլխավ անում։ Վըեր կլխավ ա անում, լալբեգյը գյուղոնմ ա, թա ասում ա՝ տըհսալ ըմ։ Լալբեգյը հըրցնում ա, թա վըբ'ըդեղ ըս տըհսալ, քառը գյուղոնմ ա, թա հըրցնում ա վըբ'ըքան պիտի պահճիս։ Թառը ծըեռքավ նշանց ա տամ խիլլա հեռու մին մըեծ քար կալբեգյը գյուղոնմ ա թա ասում ա էծերն էն ըն մըեծ քարընն դըլդումը։

Լալբեգյը քիխնամ ա տըհսնում էծերն էն ընգյունին նըստոտած։ Առաջն ա անում, պիրում։ Տահանց մաշին մին պոզը կոտրած էծ ա ինոնմ, տամ ա էտ քառըն, ասում։ — Էս ա մին շերեթ ա՝ էծերըս կորած, էնքան շոռ ըմ եկաւ, լափ վըննըհան ըմ իլալ, վըեր տու իծերես տըեղը նշանց ըս տուվալ, էս մին էծը քեզ ըմ բախշում։ Էտ քառն էլ գյուղոնմ ա թա տա ասում ա էծիս պոզը տու վըս թըխալ-կոտրալ, ուրթումնը-հավատ ա անում, ասում։ — Ես քու էծերըտ հիշտեղ ըմ տըհսալ, վըեր թիրեմ պոզն էլ կոտրեմ։ Լալբեգյը նորից ա ասում, թա էս էծը քեզ ըմ տամ, հինչ օղում ըս, ըրա, քառը նորըմինան ուրթումնը-հավատ ա անում, ասում։ — Տիյեր աստված, տուվլիր տու, ես քու էծիտ իրեսն էլ լըմ տըհսալ։ Լալբեգյը ուրանն ա ասում, քառը՝ ուրանը, ուրուկը կլիխ լըն ին-

գյուղի: Կրեզի ա մնամ, թա լիհա կռև անընն, եշում ըն, տըստնում
մին դեր ա կյամ: Դերը դաստին կլիխ ա ինգլում պենը հինչէմն
ա, լըլընքին ասում ա.—Պիտի տանըես էտ պոզը կռտրած էծը
մորթես, մատաղ անըես, վըեր էծերըտ քթալ ըս, ինձետե յել փա-
փուկ տըզերան յավ փայ պիրիս, վըեր աղոթկ անըեմ; Հանցու-
կընկերը կյանվուշ նի մննընն իծերետ մաշը, փրթին:

